ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 440 - Ա **12 հոկտեմբերի 2023 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-Ի N 245-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի և «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2021 թվականի մայիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմինների՝ առանձին և միացյալ խորհուրդների ցանկն ու կազմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի հունիսի 17-ի ու հունիսի 18-ի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 245-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման N 2 հավելվածի 71-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լուսակունք գյուղի միջնակարգ, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղի Կ. Գևորգյանի անվան միջնակարգ և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վանևան գյուղի միջնակարգ դպրոցների միացյալ կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի կազմում «Խաչատրյան Ահարոն Անուշավանի/ծնողխորհրդի ներկայացուցիչ/» բառերը փոխարինել «Սիմոնյան Անի Արշալույսի /ծնողխորհրդի ներկայացուցիչ/ բառերով:

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ